իմ զորդիսն Իսրայէլի յերկրէն Եգիպտացւոց», այնպէս ալ մեր Ջերմեռանդ աղօթքը Աստուծոյ Աթոռին կը հասնէ. Նորա ողորմութիւնն անբաւ է։ Բոլոր առաջնորդներին գրած եմ որ այսօր հոգեհանգիստ կատարեն և երեք օր երեկոյեան ժամին «Տէր ողորմեա» ըսեն ամեն եկեղեցիներում։ Ուստի, սիրելի ժողովուրդ, մենք ալ ամենայն ջերմեռանդութեամբ իջման Տաճարին մէջ բոլոր հայերու ձայնակցութեամբ առ Աստուած աղաղակենք, Նորա փեշէն բռնենք, Տէր ողորմեա՛ ըսենք. միաբանութիւնն ալ սաղմոսներ կը կարդայ, որ Դա ւիթ նեղութեան ատեն առ Աստուած կաղաղակէր։

Ձեզ ալ Հայր, կը հրաւիրեմ ամենուդ ըստ Պօղոս Առաքելոյ «վալ ընդ լացողս», զի ժողովուրդ մերն է, կը տառապի, լալ և յամենայն սրտէ և յամենայն հոգւոյ ժողովրդեան հետ ի մի բերան առ Աստուած աղաղակել և ասել. «Ո՛կ, Տէր Յիսուս, ողորմեա մեզ, ողորմութեան ժամ է արդէն»։ Տէր ողորմեա՛ ըսենք, զի աշխարհիս թագաւորներն ալ այդ պարագաներու մէջ Աստուծուն կը դիմեն։ Արկին հրաւիրելով ձեզ կաղաչեմ աղօթել հաւատքով, որ Յիսուս՝ անմահ պատարագեալն այն սուրբ Սեղանի վերայ, որ նստած է իւր երկնից Աթոռոյն վերայ Հօր Աստուծոյ աջ կողմն, բարեխօս լինի Հայոց անօգնական Ազգին համար։



ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ.

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ազգիս Վեհափառ Հայրապետի կարգադրութեամբ ամսոյս սկզբին հոգեհանգիստ կատարուեցաւ մեր տաճկահայ նահատակ եղբարց համար թէ Մայր Աթոռում, և թէ բոլոր վիճակներում։ Աստուածային զթութիւնն հայցելու համար Նորին Օծութեան հրամանով բոլոր հայ եկեղեցիներում մի շաբաթ շարունակ հսկումներ տեղի ունեցան։ «Արարատ»ի այս համարում ազգային բաժնի տակ յառաջ ենք բերում քաղուածօրէն հայրապետական այս յորդորը, որ խօսուեցաւ հոգեհանգստեան ներկայ ժողովրդին։

Կայսերական Տան ուրախառիթ տօնախմբութիւնների առթիւ գոհացողական մաղթանքներ կատարուեցան Մայր Տաճարում։ Առաջ ենք բերում փոխանակուած հեռագիրները։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.

Նորին կայսերական Մեծութեան սլատասխանը.

Ցարսկոյէ Սելօ, 5 նոյեմբ., 6 ժ. 55. ր. զկնի կէսաւուր.

ԷՋՄԻԱԾԻՆ.

ԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Շնորհ անկեղծ ունիմ վասն շնորհաւորելոյդ զիս։ Ցանձն առնեմ զնորածինն աղօթից Ձերոց։

ՆԻԿՈԼԱՅ.

—

ՑԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՕ.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ
ԹԱԳԱՒՈՐ ԿԱՑՍԵՐ.

Վասն նորոյ զեղման շնորհացն Աստուծոյ ի վերայ Օգոստափառ Տան Մեծութեան Ձերոյ, զգացմամբ ամենախորին ապնանուիրութեան՝ ի հոգի շնորհաւորեմ զաճումն կայսերական գերդաստանիդ։ Վերառաքելով առ Տէր Աստուած Ջերմեռանդն աղօթս վասն ըղձալի քաջառողջութեան Օգոստափառ Ցնողին և բարձրր նորածին Օլգա Մեծի իշխանուհւոյն

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.
5 նոյեմբ. 1895.

—

ՑԱՐՍԿՈՅԷ ՍԵԼՕ.

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ
ԹԱԳՈՒՀԻՈՑ ԿԱՑՍՐՈՒՀԻՈՑ
ՄԱՐԻԱ ՓԷՕԴՈՐՈՎՆԱՅԻ.

Խնդակցեալ ուրախութեան եկեղեցականաց իմոց և համայն հօտիս, առաջի առնեմ զանձնանուէրն իմ շնորհաւորութիւն վասն աւուր ծննդեան Ձերդ Մեծութեան և աղօթեմ առ Բարձրեալն, զի շնորհեսցէ Ձեզ, Ամենաբարեպաշտ Թագուհի, քաջառողջութիւն ամ յամայր։

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.
14 նոյեմբ. 1895.

Պատասխանի Նորին Մեծութեան Մայր Թագուհւոյ Կայսրուհւոյ.

Ցարսկ. Սելօ. 16 Նոյեմբ., 11 ժ. 40 ր. առաւօտեան.

ԷՔՍԻԱՆՕԻՆ.

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՊԻԱՆ, ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Շնորհ ունիմ ի սրտէ Ձեզ, եկեղեցականաց և համայն հօտիդ վասն բարեմաղթութեանցդ։

ՄԱՐԻԱՅ.

Պատասխանի Նորին Կայսերական Մեծութեան.

Ազասթուման. 26 Նոյեմբ., 7 ժ. 5 ր. զկնի կէսաւուր.

ԷՔՍԻԱՆՕԻՆ.

ՄԿՐՏՉԻ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

Ի սիրտ և ի հոգի շնորհ ունիմ Ձեզ վասն շնորհաւորութեան և աղօթից Ձերոց։

ԳԷՕՐԳԻ

ԱԲԱՍԹՈՒՄԱՆ

ՆՈՐԻՆ ՄԵԾՈՒԹԵԱՆ *ԹԱԳԱԺԱՌԱՆԳԻ ԿԱՑՍԵՐ.*

Ի սիրտ և ի հոգի շնորհաւորեմ զօր անուանակոչութեան Ձերդ Բարձրութեան և աղօթեմ առ Միածին Որդին Աստուծոյ վասն քաջառողջութեան և բարօրութեան Ձերոյ

ՄԿՐՏԻՉ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ.

26 Նոյեմբ., 1895.

ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄ.

Ղ. Բերբերեանի կտակը.

Սեպտեմբերի 24-ին 1894 ամի Հանգուցեալ Ղազարոս Յակովբեան Բերբերեանի կտակակատարք Թէոդոսիայի Հայ Հասարակութիւնը հրաւիրեցին ժողովի՝ ստուգելու և վաւերացնելու տարեկան հաշիւը, որ ներկայացրել էին Բերբերեանի բարեգործական նպատակների համար կտակած ստացուածների կառավարիչ կտակակատարները։ Կտակի զօրութեամբ, նոյն հաշիւը կանխապէս քննած և ստուգած էր ըստ արդարացուցիչ վկայութեանց Թէոդոսիոյ քաղաքագլխի պաշտօնակատար Ա. Ե. Կրիմը և Թէոդոսիոյ Հայ հասարակութիւնից ընտրուած և Բեսսարաբիոյ ու Նոր—Նախիջևանի թեմական վարչութիւնից հաստատուած վերահսկիչ հաշուատես Ա. Յ. Ալթունճին։ Հաշիւը կանոնաւոր գտնելուց և նոյնը վաւերացնելուց յետոյ, հասարակութիւնը յայտնեց իւր շնորհակալութիւնը կտակակատարներին՝ սոցա ժառանգական ստացուածոց կառավարութեան մասին յանձն առած աշխատութեանց համար։ Նոյն համարում տպագրուած հաշուից երևում է որ 1895թ. Օգոստոսի 1-ից կտակակատարների տնօրէնութեան ներքոյ գտանւում են՝ անշարժ կալուածք 102500 ռբ. արժողութեամբ և դրամագլուխ 23571 ռբ. 99 կ. պարտամուրհակներով և առ ձեռն դրամով։ Բերբերեանի կտակի զօրութեամբ զանազան բարեգործական հիմնարկութեանց դրուելու դրամական նպաստները, ստիպենդիաների հաստատուելը, դպրոցների բացուիլը և այլն կարող են տեղի ունենալ միայն այն ժամանակ, երբ դրամագլուխը, որ պէտք է դրուի Թէոդոսիոյ քաղաքային բանկը. հասնելու լինի մինչ 130 հազար ռուբլու։ Դժբախտաբար մինչև այդ ժամանակը շատ երկար պէտք կը լինի սպասել։ Ըստ որում անշարժ կալուածքից ստացուած տարեկան եկամտից, կտակի համաձայն, հանգուցեալի կնոջ տրւում է թոշակ իւրաքանչիւր տարի 6000 ռուբլի, ազգական օրիորդին՝ 480 ռ. բաց յայդ մանէ հարկաւորւում է փող նորոգութեանց և այլ ընթացիկ ծախքերի համար։

Կտակի մանրամասնութիւնները հրատարակուած էին հայ պարբերական հրատարակութեանց մէջ և իւրաքանչիւր ընթերցող, որ հետաքրքրւում է այդ կտակով, տպագրուած տարեկան հաշիւը կարդալով կարող է համոզուել, որ կտակակատարք անկարող են փութով իկատար ածել կտակողի կամքը։

Մնում է միայն երկայնմտութեամբ սպասել մինչև որ դրամագլուխը հասնի որոշեալ 130 հազար ռուբլի գումարի. և այն ժամանակ միայն կարելի կը լինի ձեռնամուխ լինել կտակողի կամքը իրագործելու, առ որ հարկաւոր է առ նուազն երեսուն տարի կամ աւելի ժամանակ։

Կտակատար Յ. ՍԵԼԻԱՆՑ.

17 Նոյեմբերի.
1895 թ.
Սիմֆերոպոլ։

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ.

Կոնդակ յանուն Իշխան Աբամելիք—Լազարեանի և անդամոց խորհրդոյ եկեղեցեաց Ս. Պետերբուրգի Հմրաւ. 934. որով յուշ առնի նոցա խոստումն իւրեանց ի տալ ամ ըստ ամէ ղ 5000